

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

“10” մայիսի 2012թ


№ 51 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶՐԱԳՐԱԿԱՆ ԵՎ  
ԶՐԱԵՐԿՐԱՔԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ  
ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով “Իրավական ակտերի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.20-րդ կետով, հիմք ընդունելով Կապանի Օրհուս բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի ջրագրական և ջրաերկրաբանական բնության հուշարձանների պահպանության և օգտագործման հետ կապված օրենսդրության պահանջների կատարման ընթացքն ուսումնասիրելու նպատակով, **ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի ջրագրական և ջրաերկրաբանական բնության հուշարձանի պահպանության և օգտագործման հետ կապված օրենսդրության պահանջների կատարման ընթացքն ուսումնասիրող հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն N1 հավելվածի:
2. Հանձնաժողովին՝ ուսումնասիրել Սյունիքի մարզի ջրագրական և ջրաերկրաբանական բնության հուշարձանի պահպանության և օգտագործման հետ կապված օրենսդրության պահանջների կատարման ընթացքը, տասնօրյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ:
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

 Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ

2012թ. Մայիսի 10  
ք. Կապան

Կ Ա Ձ Մ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի ջրագրական և ջրաերկրաբանական բնության հուշարձանների պահպանության և օգտագործման հետ կապված ՀՀ օրենսդրության պահանջների կատարման ընթացքն ուսումնասիրող հանձնաժողովի

- 1 Ս.Թանգյան ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ (հանձնաժողովի նախագահ)
- 2 Ա.Ուստաբաշյան ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ
- 3 Ս.Ավետիսյան ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻև ՀԳՄ հարցերով վարչության պետ
- 4 Մ. Կոստանդյան ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ
- 5 Կ.Կոզմանով ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ
- 6 Թ. Ղազարյան ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ
- 7 Ա. Գրիգորյան ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման գործակալության հարավային ջրավազանային տարածքային կառավարման բաժնի պետ (համաձայնությամբ)
- 8 Ա.Հովակիմյան ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Սյունիքի տարածքային բաժնի պետի տեղակալ (համաձայնությամբ)

ՀՀ Սյունիքի մարզպետարանի  
աշխատակազմի ղեկավար



Ռ. Ղազարյան